

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 7. Պետական տուրքի գանձման օբյեկտները

Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը գանձվում է՝

ա) դատարան տրվող հայցադիմումների, դիմումների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար.

ա1) Սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումների համար.

ա2)

բ) **(կեպը հանվել է 28.12.98 ՀՕ-277)**

գ) նոտարի կողմից նոտարական գործողություններ կատարելու համար.

դ) քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, գրանցման հիման վրա վկայական, վկայականի կրկնօրինակ կամ տեղեկանք տրամադրելու, քաղաքացիական կացության ակտը վերականգնելու, քաղաքացիական կացության ակտում ուղղում, փոփոխություն կամ լրացում կատարելու, դրա հիման վրա վկայական կամ տեղեկանք տալու, ընտանեկան կարգավիճակի մասին տեղեկանք տալու, Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերն ապոստիլով վավերացնելու համար.

ե) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար.

զ) հյուպատոսական ծառայություններ կամ գործողություններ իրականացնելու համար.

է) պետական գրանցման համար.

ը) մշակութային արժեքները արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու իրավունքի եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տալու համար.

թ) գյուտերի, արդյունաբերական դիզայնների, բույսերի սորտերի, ապրանքային նշանների, աշխարհագրական նշումների, ծագման տեղանունների, երաշխավորված ավանդական արտադրանքի, ֆիրմային անվանումների (արդյունաբերական սեփականության օբյեկտների), ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների

իրավական պահպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար.

ժ) ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար.

ժա) լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու նպատակով լիցենզիաներ տալու համար.

ժբ) սույն օրենքի 14.2-րդ հոդվածով, 19-րդ հոդվածի 15.4-րդ և 15.4.1-ին ենթակետերով, 19¹, 19², 19⁴, 19.7, 19.8 և 20 հոդվածներով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար.

ժգ) օրենքով սահմանված դեպքերում ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար.

ժդ) մաքսային մարմինների կողմից օրենքով սահմանված դեպքում մաքսային գործառնությունների իրականացման, մաքսային ուղեկցման, ապրանքների ժամանակավոր պահպանության, ինչպես նաև նախնական որոշումների տրամադրման համար.

ժե) ֆիզիկական անձանց կողմից սեփականության իրավունքով իրենց պատկանող ավտոմեքենան այլ ֆիզիկական անձանց օտարելու դեպքում տվյալ տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի դադարման գրանցման համար, եթե ավտոմեքենան օտարվում է այն ձեռք բերելուց (սեփականության իրավունքի պետական գրանցումից) հետո՝ 365 օրվա ընթացքում: Սույն պարբերության իմաստով՝ ավտոմեքենա ձեռք բերել չի համարվում գույքի՝ ժառանգությամբ կամ նվիրատվությամբ ստացումը, իսկ օտարում է համարվում մեկ ֆիզիկական անձից այլ ֆիզիկական անձին ավտոմեքենայի սեփականության իրավունքի փոխանցումը՝ որևէ ձևով կատարվող հատուցմամբ (այդ թվում՝ մասնակի) կամ անհատույց:՝

ժզ) «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքով սահմանված անհատական և հրապարակային ծանուցումների համար:

Հոդված 8. Պետական տուրքի դրույքաչափերը

Պետական տուրքի դրույքաչափերը սահմանվում են գնահատման ենթակա գույքի արժեքի կամ սույն օրենքով սահմանված բազային տուրքի նկատմամբ, բացառությամբ սույն օրենքի 7-րդ հոդվածի «ժե» և «ժզ» պարբերություններով սահմանված՝ պետական տուրքի գանձման օբյեկտների ~~«ժե» պարբերությամբ սահմանված՝ պետական տուրքի գանձման օբյեկտի:~~

Բազային տուրքի չափ է սահմանվում 1000 դրամը:

Հոդված 20.5. «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքով սահմանված անհատական և հրապարակային ծանուցումների համար պետական տուրքի դրույքաչափերը

1. «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքով սահմանված անհատական և հրապարակային ծանուցումների համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

1) Անհատական ծանուցման համար	
ա) տեքստի դեպքում	յուրաքանչյուր տպագրական նիշի համար 0.05 դրամ, բայց ոչ պակաս 50 դրամից և ոչ ավելի 250 դրամից:
բ) էլեկտրոնային փաստաթղթի դեպքում	յուրաքանչյուր կիլոբայթի համար 0.5 դրամ, բայց ոչ պակաս 100 դրամից և ոչ ավելի 500 դրամից:
2) Հրապարակային ծանուցման համար	յուրաքանչյուր տպագրական նիշի համար՝ 10 դրամ, բայց ոչ պակաս 2000 դրամից և ոչ ավելի 100000 դրամից, իսկ _____ «Հասարակական կազմակերպությունների _____ մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով _____ նախատեսված հաշվետվության _____ հրապարակման համար ոչ ավելի 5000 դրամից:

2. Անհատական ծանուցումը և՛ տեքստ, և՛ էլեկտրոնային փաստաթուղթ միաժամանակ պարունակելու դեպքում պետական տուրքը գանձվում է դրանցից յուրաքանչյուրի համար հաշվարկված պետական տուրքերի հանրագումարի չափով:»: